# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Խելացի Դարբնոց ՍՊԸ-ն ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-26/219 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | |
|---|---|---|
| | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 3 | Խելացի Դարբնոց ՍՊԸ | Մետաղական տուռնիկներ (տեղադրումով). Մետաղական տուռնիկը նախատեսված է ողնաշարի, պարանոցի և ձեռքերի բարդ մկանային զարգացման համար: Տարիքային խումբ՝ սկսած 14 տարեկանից: Հետևյալ սպորտային կառույցը բաղկացած պետք է լինի 3 հենասյուներից և տարբեր բարձրությունների 3 խաչաձողերից: Հենա- սյուները պետք է պատրաստված լինեն մետաղական պրոֆիլային խողովակներից՝ 80x80x2մմ հատվածքով, յուրա- քանչյուրի երկարությունը 3200մմ, որից՝ 700մմ պետք է տեղադրվի գետնի մեջ՝ բետոնացումով: Խաչաձողերը պետք է պատրաստված լինեն D25մմ տրամագծով մետաղական խողովակներից: Խաչաձողերը պետք է եռակցված լինեն 3 հենասյուներին՝ տարբեր բարձրությունների վրա՝ 1900մմ, 2100մմ և 2300մմ, խաչաձողերի երկարությունը պետք է լինի 1340մմ: Մետաղական տարրերը պետք է ներկված լինեն պոլիմերային փոշեներկերով: Անհրաժեշտության դեպքում կարելի է կատարել արտաքին տեսքի փոփոխություն, առանց տեխնիկական բնութագրից շեղումների: Հենասյուների տեղադրման համար գրունտում պետք է փորվեն 3 փոսեր՝ դրանց ոտքերի բետոնացման համար: Մարզասարքը հենասյուներով պետք է տեղադրվի 3 փոսերի մեջ և բետոնացվի B15 դասի բետոնով կետային հիմքերով՝ 0,4x0,4x0,7մ չափսերով: Մարզասարքերի տեղադրումը իրականացնել պատվիրատուի ներկայացված |

| | | |
|---|---|---|
| | | հասցեներով: Երաշխիքային ժամկետը` 1 տարի: 1.Տուռնիկների պատրաստումը իրականացնել շինարարական նորմերի, կանոնների և տեխնիկական պայմաններին համապատասխան 2.Տեղադրումը պետք է իրականացվի պատվիրատուի կողմից տրվող պատվեր առաջադրանքի հիման վրա: Բոլոր ապրանքները պետք է լինեն նոր, չօգտագործված: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

Хелаци Дарбноц ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-26/219 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | |
|---|---|---|
| | наименование производителя | технические характеристики |
| 3 | | |